



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

46 6 ≠



Տրոխաբներ բոլոր լեզուներէ, ժառեր.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՂԱՅՈՒ ԳՐԱԳՐԱՆ»-ի № 4(7)

Հ. Փրումյան

ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԸ

ՅԵՎ

ՆՐԱՆՑ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ
ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

ՅԵՐԵՎԱՆ
1925

Խմբագրութեամբ
Հովհովկոմասի Խմբ. Կոլլեգիայի

Յերեվան, Տպագրական տրեստի 2-րդ տպարան

Գրառ. № 1660

Տիրաժ 5000

Պատվ. № 1587

ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՅ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ
ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Տարի չի լինում, վոր մեր դաշտերի բերքի պակասելու մասին գանգամներ չլսվեն: Դաշտերի բերքը պակասելու հետ վատանում են նաև արոտները և խոտհարքները: Այս բոլորի հետևանքը լինում է այն, վոր քաղցած է մնում ինքը գյուղացին յեվ նրա հետ ել իր անասունները:

Հողի պակաս բերք տալու պատճառն ել հասկանալի յե, վորովհետև բույսերն իրենց սնունդն ստանում են հողի մեջ յեղած մննդարար նյութերից, վորոնց քանակը տարբեր տեսակի հողերի մեջ տարբեր է լինում: Այս բանը մեր գյուղացիք լավ գիտեն, և շատ անգամ կլսեք նրանցից, թե՛ «այս հողը հարուստ է, ուժեղ, իսկ մյուսը աղքատ է և թույլ»: Գյուղացիք գիտեն նաև, վոր սև, փափուկ և փխրուն հողերը լավ են, քան մոխրագույն, չոր և կոշտավոր հողերը: Այս բոլորը հասկանալով է, վոր հողագործներն իրենց բանջարանոցները և բոստանները պարարտացնում են գոմաղբով: Նույն բանը լավ կլինի, և նույնիսկ անհրաժեշտ է, անել հացահատիկներ ցանվող դաշտերի համար, յեթե միայն մեր գյուղացիք գոմաղբը գործ չածեն իրեն վառելիք փայտի պակասութեան կամ բալորովին չլինելու պատճառով:

Բույսերը սնվում են հողի մեջ յեղած մանրաբայր նյութերով: այս բանը հողագործը փորձով գիտե և աշխատում է հողին վերագործնել նրա մեջ պակասած նյութերի գոնե մի մասը:

Մեկ, յերկու կամ յերեք տարով հողը հանգիստ թողնեն այն նշանակութիւնն ունի, վոր նրան հնարավորութիւն է արժում ժամանակի ընթացքում իր մեջ հավաքելու բույսերի համար հարկավոր և անհրաժեշտ մանրաբայր նյութերը:

Հողը հանգստացնելու և ուժեղացնելու այս միջոցը պայտապէս գտել է հազարավոր տարիների փորձով:

Ամեն մի հողագործ գիտե, վոր խամ հողերում հացարույսերը լավ են աճում և թողնում է, վոր հողը «հանգստանա», այսինքն արհեստական կերպով աշխատում է ստեղծել «խամ» հող: Բայց այս արհեստականը նման չէ բնական խամ հողին: Այս բանն ավելի պարզ նկատելի չէ բնական և արհեստական խամ հողերում բուսած խոտերը համեմատելիս: Բնական խամ հողում բուսնում են մեծ քանակութեամբ քաղցր և մանրաբայր խոտեր, իսկ արհեստական խամ հողում բուսնում են կոշտ, անասուններին կերել համար անպէտք մուխտուներ (ալաղ): Այդ մուխտուներն ել թէև հողագործը քաղում և տալիս է անասուններին, բայց դա ել անում է կարիքից ստիպմամբ:

Յեթե հանգստի թողած հողի բուսականութեանը նման չէ բնական խամ հողի բուսականութեանը, ուրեմն նշանակում է, վոր հողը մեկ, յերկու և նույնիսկ յերեք տարում չի կարողանում հաւաքել իր կորցրած ուժերը: Վերջնապէս հողը կարճ ժամանակում հաւաքի իր ուժերը և դանա պարզապէս, պետք է դիմել խոտացանութեան, այսինքն՝ արհեստական կերպով բազմացնել լավ ու քաղցր

խոտերը, վորոնք բուսնում են յերկար ժամանակ չը հերկված խամ հողերում:

Սրանից 140 տարի առաջ մի գերմանացի հողագործ, Շուբարտ անունով, նկատում է, վոր յերեքնուկ բուսած հողերում հացի բերքն առատ է լինում:

Ոգտվելով դրանից, նա հաւատում է յերեքնուկի սերմերը և ցանում իր հողերում: Յերկու տարի շարունակ նա յերեքնուկի լավ բերք է ստանում և ավելի շատ, քան վորեւ խոտաբերից: Հետո յերեքնուկի տեղը վարում է և հացահատիկ ցանում ու ստանում է իր շրջանում չափազանց բերք: Տեսնելով յերեքնուկի տված ոգուտը, գերմանացի այդ հողագործն իր բոլոր հողերում հերթով ցանում է յերեքնուկ: Սրա որինակին հետևում են նրա հարեանները: Այսպիսով այդ շրջանի հողերի բերքը հետզհետե բարձրանում է:


Փորձով պարզված է, վոր բերքն առատ է լինում ուրիշ խոտաբույսեր մշակելուց հետո յեղ, ժամանակագ առվույթից (յանջից), կորնզանից և առհասարակ նման բազմապէս բույսերից հետո: Այդ բույսերն ունեն ուժեղ և հողի մեջ խորը գնացող արմատներ, վորոնց սզնութեամբ ծծում են հողի խոր շերտերից մանրաբայր նյութեր: Իսկ հացարույսերի արմատները խորը չեն գնում, ուրեմն և չեն կարող սպախել հողի ներքին շերտերում գտնված մանրաբայր նյութերից: Ասացինք, վոր խոտաբույսերը խորը շերտերից ծծում են հողի մանրաբայր նյութերը, այդ նյութերի մեծ մասը բույսերը գործ են ածում հողից դուրս գտնված իրենց մասերի մնալի համար, իսկ մի մասն էլ մնում է հողի վերին շերտերում, վորը հետո դառնում է մնունը խոտաբույսերից հետո մշակվող բույսերի համար:

Բայցի դրանից, պարզված է, վոր յերեքնուկի, առ-



11-243639

վույտի, կորնդանի և առհասարակ այն բոլոր բույսերի արմատների վրա, վորոնց սերմերը նման են լոբու սերմերին, (սրանք կոչվում են լոբիածաղիկ բույսեր) դանվում են մեծ քանակությամբ պալարներ (խոցեր) (Տես նկ. 1):



(Նկ. 1) Ֆեբեգուկի արմատներն իրենց պսակներով

Այդ պալարների մեջ հավաքվում են բույսի սննդի համար շատ անհրաժեշտ նյութերից՝ մեկը, վորը կոչվում են ազոտ: Հողերը զուսպորով պարարտացնելիս (զոմաղբն ել պարունակում են ազոտ), մենք հողը զլխավորապես հարստացնում ենք նույն ազոտով:

Հողագործների կատարած բազմաթիվ փորձերը ցույց

են տալիս, վոր խոտաբույսերից հետո հացի բերքն ամեն մի դեպքումնից ստացվում է 16—30 փուլթ ավելի:

Խոտաբույսերի ոգուտն այն չէ միայն, վոր բարձրացնում է հողի սլաղաբերությունը. այդ բույսերի նշանակությունը մեծ է նաև անասնապահության, մանավանդ կաթնատու և լծկան տավարի խնամքի համար:

Մի դեպքումնից բնական լավ խոտահարքից հազիվ է ստացվում 60—90 փուլթ խոտ, ասենք՝ 100 փուլթ, իսկ ցանովի խոտահարքից կարելի չէ ստանալ վոչ պակաս 120, նույնիսկ 500 փուլթ և այն ել ավելի լավ հատկության խոտ: Որինակ՝ ռւմ հայտնի չէ առվույտի բարձր արժեքը:

Մոսկվայի նահանգի այն գյուղերում, վորտեղ խոտացանությամբ չէին պարապում, կովերի կենդանի քաշը 16 փուլթ 20 ֆունտից, իսկ մի տարում ստացած կաթը 98 և կես դույլից (վեդրոյից) ավելի չէր լինում. բայց այն գյուղերում, վորտեղ պարապում էին խոտացանությամբ, կովերի կենդանի քաշը 19 փ. 30 ֆունտից և մի տարում ստացված կաթը 123 դույլից (վեդրոյից) պակաս չէր լինում:

Նման որինակներ կարելի չէ շատ բերել: Կասկած չկա, վոր խոտացանությունը բարձրացնում է բերքի քանակը, շատացնում, լավացնում է անասունների կերը, բարձրացնում է անասուններից ստացված արդյունքը և նույնիսկ նպաստում հրանց բազմանալուն: Հասկանալի չէ, վոր շատ կեր ունենալու դեպքում կարելի չէ պահել և շատ անասուններ: Անասունների բազմանալու հետ ավելանում է նաև զոմաղբը, իսկ դա մեզ անհրաժեշտ է հողերը պարարտացնելու և նրանց սլաղաբերությունը բարձրացնելու համար:

Ով մի անգամ արդեն խոտ է ցանել, առևս նրանից չի

հրաժարվի, վորովհետև խոտ ցանողի թե հողի բերքն և առատանում և թե անասուններն են բաղմանում:

Պարզելով խոտացանության անհրաժեշտությունն առաված ոգուաները, այժմ ծանոթանանք խոտաբույսերի պիտանքի տեսակների հետ:


ՅԵՐԵՔՆՈՒԿ.—Սրա կարմիր և սպիտակ ծաղկավոր տեսակները շատ տարածված են լեռնային շրջանների արոտատեղերում, խոտհարքներում, արտերի յեղերում և անտառների բացուտներում:

ՅԱՆԵԼՈՒ ՅԵՐԵՔՆՈՒԿՆ ունի կարմիր ծաղիկներ և սպիտակ յերեքնուկից զանազանվելու համար կոչվում են *ցանելու կարմիր յերեքնուկ*: Սպիտակ յերեքնուկը ցանում են մեծ թե դաշտերում, այլ խոտհարքներում, յերբ ուզում են այդ խոտհարքներն աղնվացնել: Յեթե ցանելու կարմիր յերեքնուկը համեմատենք իբր վայրենի տեսակների հետ, կտեսնենք, վոր ցանելու կարմիր յերեքնուկի ցողունները բարձր են, հյութալի, իսկ տերևները՝ փափուկ և մալի (Տես նկ. 2 և 3):

Յերեքնուկի սերմերը շատ նման են յսրուն: Սերմի գույները միատեսակ չեն: Նրանք լինում են դեղին, մուգ-մանիշակագույն, կապտավուն-դեղին: Գնելիս պիտի ուշխատել, վոր սերմերը զանազան գույնի լինին: Սերմերի միատեսակ գույնը վատ հատկության նշան է:

Մեկ դեպքատին հողում ցանում են միջին հաշվով մեկ փութ 20 Փ. սերմ, իսկ յեթե հողը լավ և մշակված է նշաններ կան, վոր մեծ քանակությամբ մոլախտեր չեն աճիլ, կարելի չե ցանել նաև 1 փ. կամ 1 փ. 10 Փ. սերմ:

Յերեքնուկն ավելի շուտ ցուրտ յերկրի բույս է. նա սիրում է սև-փխրուն և խոնավ հող: Մեր լեռնային շրջանների հողերը յերեքնուկի համար լավ են և դրա հա-



(Նկ. 2) ՅԵՐԵՔՆՈՒԿՆ առաջին տեսակ

մար էլ լեռնային բոլոր խոտհարքների խոտերի մեջ զանազան տեսակի յերեքնուկներ շատ են լինում:

ԿԱՐՄԻ ՅԵՐԵՔՆՈՒԿ բաղմամբա բույս է: Առհասարակ նրանից ոգավում են յերկու տարի, իսկ հետո հողի հերկում և տեղը հացահատիկներ կամ կտավառ են ցանում: Առաջին տարին ցանված յերեքնուկը խոտ չի առաքիլ, այլ տալիս է մի փունջ տերևներ, վորոնք փր-



(Նկ. 3) Յերեքնուկը յերկրորդ յեւ յերրորդ տարին

վում են հողի յերեսին: Այդ շրջանում նրա արմատն ուժեղ կերպով զարգանում և հաստանում է վերին ծայրում: Այս մասը կոչվում է արմատավղիկ: Առհասարակ յերկրորդ տարվա զարնանը զարգանում են ցողունները ծաղիկներով, այնպես վոր յերեքնուկը քաղել կարելի յե յերկրորդ և յերրորդ տարում. միտք չկա յերկու տարուց ավելի պահել յերեքնուկը, վորովհետև ուրիշ խոտերն աստիճանաբար զարգանալով նրան խեղդում են, այդ պատճառով ավելի լավ է հերկել, ինչպես ամեն տեղ ընդունված է:

Ասացինք, վոր յերեքնուկն առաջին տարին խոտ չի տալիս, բայց վորպեսզի հողից կարելի լինի ոգուտ ստանալ, յերեքնուկը ցանում են աշնանացանի կամ գարնանացանի հետ, ի նկատի ունենալով, վոր այնուհետև հողամասը յերկու տարի շարունակ բուսված կլինի յերեքնուկով:

Յերեքնուկի սերմերը ցրտերից, սառնամանիքներից չեն վախենում, իսկ ծլելու և աճելու համար պահանջում են մեծ քանակությամբ ջուր, այդ պատճառով նրան պետք է ցանել այն ժամանակ, յերբ ձյունը նոր է ըսկսում հալվել և հողն ել դեռ փափկած չի լինում. այդ ժամանակ ավելի հեշտ է դաշտերում ման գալ և սերմերը շաղ տալ. հալվող ձյունի ջրերը սերմերը քաշում են հողի մեջ:

Յեթե ցանկանում են յերեքնուկը գարնանացանի հետ ցանել, առաջ ցանում են հացահատիկը և փոցխում, հետո ցանում են յերեքնուկը և նորից փոցխում, վորպեսզի յերեքնուկի սերմերը հողով ծածկվեն:

Յերեքնուկի սերմերը շատ մանր են. վորպեսզի կարելի լինի հավասար ցանել, սերմերը խառնում են ավազի կամ կերմակ (մանր) հողի հետ ու անյակես ցանում:

Հացաբույսերի մեջ յերեքնուկի մատղաշ ծիլերն ամուր պաշտպանվում են արևի այրող ճառագայթներից:

Լինում են տարիներ, յերբ հացաբույսերը քաղելուց հետո աշունը լինում է տաք ու յերկարատև, այդ դեպքում յերեքնուկը հենց առաջին տարին ուժեղ կերպով զարգանում է. այսպիսի դեպքերում յերեքնուկը պետք է քաղել, բայց վոչ տակից, այլ վերջով ու կես հողից բարձր:

Մատղաշ յերեքնուկի մեջ անասուններ արածեցնել

չի կարելի, փորովհետեւ նրանք կարող են յերեքնուկը կրծել մինչև արմատավայրը և փռնչացնել նրա վրա գրանալած սրտակները, փորնցից ամեն տարի տառաջանում են նոր ցոլուններ: Յերկրորդ և յերրորդ տարին այդ արմատավայրերը կարճանում են և ծածկվում հողով, իսկ առաջին տարին նրանք զանվում են հողից դուրս:

Յերեքնուկի մեջ փռնալներ և այծեր չպետք և արածեցնել, փորովհետեւ նրանք խոտը շատ տակից են կրծում:

Յերեքնուկի մեջ անասուններ արածեցնելիս պետք և ի նկատի ունենալ, փոր կանաչ և թաքմ յերեքնուկն անասունների փորը փքացնում և, դրա համար ել վաղ առավոտյան, յերբ խոտը ծածկված և ցոլով կամ թաց և, անասուններ չպետք և թողնել յերեքնուկի մեջ: Մինչև յերեքնուկով կերակրելը, նրանց պետք և ջրել և, յեթե հնարավոր և, առաջ կերակրել չոր խոտով, փորպետքի նրանք շատ չուտեն յերեքնուկը: Խոտի համար յերեքնուկը պետք և քաղել այն ժամանակ, յերբ ամբողջ գաշտը ծածկված և լինում ծաղիկներով: Այդ շրջանում ստացվում և լավ բերք:

Ամառվա ընթացքում յերեքնուկը քաղում են մեկ կամ յերկու անգամ, իսկ աշնանն ստացվում և յերեքնուկի արածեցնելու լավ կանաչ: Մեկ գեսյառինից կարելի չի ստանալ մոտ 400 փութ խոտ, բայց 150 փվից փռչ պակաս:

Յերեքնուկի արմատները հողում շատ խորն են գնում և փորպետքի նրանք կարողանան ող ստանալ, հողը պետք և լինի փխրուն, իսկ փորպետքի հողը փխրուն չլինի, նրան վրա անասուններ չպետք և թողնել: Բացի դրանից հարկավոր և ամեն անգամ գարնանը և աշնանը յերեքնուկի

գաշտը փոցիսել, փորպետքի հողի վերին շերտը փափկի: Աշնանը կարելի չի հողը փոցիսել, յերբ անասուններն այլևս յերեքնուկի մեջ չեն արածիլ:

Յերեքնուկը մի մեծ թշնամի ունի, դա՝ գալլախոտն և (դելուկ): Յեթե նա յերեքնուկի մեջ բնի, անարգյալան կփռնչացնի նրան: Այս բույսը փաթաթվում և յերեքնուկին և սպրում նրա հյութիկով: (Տես նկ. 4):



(Նկ. 4) Գալլախոտը յերեքնուկի վրա

Չենց փոր յերեքնուկի վրա գալլախոտ յերեկա, այդտեղը պետք և նավթ ամել ու այրել և կամ պղնձի կամ յերկաթի արջասպով սրսկել (100 մաս ջրին պետք և վերցնել հինգ մաս արջասպ): Իսկ յեթե նկատվի, փոր գալ-

լախոտը բազմացել է արդեն, պետք է հողը հերկել և յերկու յերեք տարի յերեքնուկ չցանել:

Յերեքնուկը թեև բազմամյա բույս է, բայց նա լրիվ բերք տալիս է յերկու տարի, չհաշված ցանելու տարին, իսկ յեթե ցանկանում են հողից ավելի յերկար ժամանակ խոտ ստանալ, այն դեպքում յերեքնուկի հետ ցանում են նաև սիզ խոտ, վորի մասին կխոսենք հետո: Խառնուրդի համար վերցնում են 20—30 ֆ. յերեքնուկի սերմ, և 15—20 ֆունտ սիզ խոտի սերմ: Սիզ խոտն սկսում է զարգանալ միայն յերրորդ տարում: Նշանակում է, առաջին յերկու տարում ուժեղ զարգանում է յերեքնուկը, իսկ հետո հետզհետե սկսում է զարգանալ սիզ խոտը:

ԱՌՎՈՒՅՏ.—(Յոնջա) (Տես նկ. 5): Յերեքնուկը լավ բանում է խոնավ և ցուրտ շրջաններում, իսկ առվույտն, ընդհակառակն, չոր և տաք շրջանների բույս է: Արարատյան դաշտում առվույտ ցանում են վաղուց: Բայց առվույտը կարելի չէ ցանել նաև ավելի պակաս տաքություն ունեցող ուրիշ շրջաններում: Այդ դեպքում պետք է ընտրել ցրտերից և սառը քամիներից պաշտպանված տեղեր: Այդ տեղերում ոգտակար է առվույտ ցանել և այն պատճառով, վոր նրա ծաղիկները մեղրատու յեն: Առհասարակ մեղվապահական շրջաններում վորպես մեղրատու բույսեր՝ պետք է մշակել առվույտ, յերեքնուկ և կորնգան:

Առվույտի սերմերը նույնպես մանր են, բայց յերեքնուկի սերմերից խոշոր են և դարձյալ լոբու նման: Լավ սերմերը լինում են մուգ-դեղին և փայլուն: Մեկ դեռյառին հողում ցանում են մոտ յերկու փութ:

Առվույտի արմատները հողի մեջ շատ խորն են գրնում և քանի խորն են գնում արմատները, այնքան բույսը լավ



(Նկ. 5) Առվույտի ցողունը ծաղիկներով

է աճում ու զարգանում և քիչ վնասվում յերաշտից: Այս հանգամանքը խոշոր նշանակություն ունի տաք շրջանների համար, վորտեղ ջուրն առհասարակ չի բավականացնում:

Առվույտը շատ և վախենում մոլորությունից (ալա-
զից), փորձեր առաջին տարին նրան հեշտութեամբ կարող
են խեղդել: Այդ պատճառով առվույտին հատկացրած հո-
ղերը պետք է խորը հերկել և լավ մշակել: Յեթն ցանքսը
կատարվելու յե դարնանը, լավ կլինի վոր հողը հերկվի աշնա-
նը, իսկ յեթն ցանքսն արվելու յե աշնանը, այն ժամա-
նակ հերկը պետք է անել դարնանը կամ ամառվա սկզբը-
ներին: Իսկ յեթն ամառվա ընթացքում հողը ծածկվում է
խոտերով, այն դեպքում փոքրիկով պետք է վաշխացնել
նրանց:

Պարզ և ուրեմն, վոր առվույտ կարելի յե ցանել թե
աշնանը և թե դարնանը:

Առվույտի ցանքսն աշնանն անելու դեպքում՝ ցանքսը
պետք է անել շուտ, այսինքն՝ մինչև ցրտերի ընկնելը,
վորպեսզի բույսը ժամանակ ունենա խորացնել իր ար-
մատները և ամրանալ, վորից հետո նրա ծիլերը սառնա-
մանիցներից ալիս չեն վնասվի: Վաղ աշնանը կատարած
ցանքսը նրանով և լավ, վոր հենց առաջին ամառը կարելի
յե բազել:

Հայաստանում ընդունված և առվույտի ցանքսն անել
դարնանը, բայց վորովհետև առվույտի մատղաշ ծիլերը
վնասվում են ցրտերից, իսկ մեզ մոտ դարնանը ցրտեր
հաճախ են լինում, այդ պատճառով չի կարելի առվույտը
մենակ ցանել վաղ դարնանը: Առհասարակ առվույտը ցա-
նում են վորեւ հացարույտի հետ, վորի ծիլերը նրան
պաշտպանում են թե ցրտերից և թե արևի այրող ճա-
ռագայթներից: Իբրև պաշտպանող բույս վերցնում են
ցորենը կամ դարին, բայց դարին ավելի լավ է, վորովհե-
տե սա ավելի շուտ և հասնում և շուտ քաղվելով՝ հնարա-
վորություն և տալիս առվույտին արագ զարգանալ:

Յանքսը կատարվում է այսպես. առաջ ցանում են
հացահատիկը և փոցխում, հետո վրայից շաղ տալիս առ-
վույտի սերմերը և ցախի թեթև տափանով ծածկում:


Առվույտի խնամքն առհասարակ սկսվում է հացա-
բույսը-բազելուց հետո: Յեթն հողը ծածկված է մոլորու-
տերով (ալազով), պետք է անպայման մաքրել այդ մո-
լորությունը: Ինչ վոր յերեքնուկի մշակության մասին ասա-
ցինք, նույնը պետք է կրկնենք նաև առվույտի մասին:
Մատղաշ առվույտը չի կարելի արածեցնել, վորովհետև
անատունները կարող են կրծել նրա արմատավորվածները,
վորնից վրա հասած պտուղներից դուրս են գալու տե-
րեններով՝ և ծաղիկներով հոր ցողուններ:

Յեթն հացարույտը հնձելուց հետո հողը շատ չոր լի-
նի, պետք է առվույտը ջրել: Իսկ յեթն ջրելուց հետո
յե նա սկսի չորանալ, պետք է փոցխել յերեքնուկի փոց-
իներով: Այդ անում են նրա համար, վորպեսզի փխրուն
հողի միջով ար հեշտութեամբ կարողանա արմատներին
հասնել:

Առվույտը սիրում է սաք, չոր և կրային հողեր: Նա
վատ և աճում խոնավ և թաց հողերում: Վորքան հողը
ժանր և կալային լինի, այնքան ավելի խորը պետք է
հերկել: Յեթն հողը կրային չէ, առվույտի հաջող դար-
պացման համար լավ կլինի պարարտացնել կրով: Բայց այս
ձեի պարարտացման կարիքը քիչ կլինի, վորովհետև մեր
հողերն առհասարակ կրով հարուստ են:


Լավ կլինի առվույտին հատկացրած հողերը պարար-
տացնել մոխրով: Մոխիրը լայնականաչափ բարձրացնում
է առվույտի բերքը: Տեղում մոխիրը շաղ են տալիս առ-
հասարակ յերկրորդ մոլորվա գացնանը կամ առաջին տար-
վա աշնանը: Մեկ գնալառին հողում պետք է շաղ տալ
40 60 փուլ մոխիր:

11-243639r



Առվույտը բազմամյա բույս է: Առհասարակ առվույտ մշակում են հատուկ տեղերում և խոտ ստանալու համար պահում են 7—9 տարի: Բայց առվույտ ցանում են վոչ միայն խոտ ստանալու նպատակով, այլ և ուշժից ընկած հողերը լավացնելու համար: Այս դեպքում ձեռնտու յե առվույտ ցանած հողը հերկել 5-րդ տարում: Առվույտից հետո հողը յերկար տարիներ կարող է լավ բերք տալ: Որինակ՝ նրանից հետո բամբակը շատ հաջող բերք է տալիս:

Ամեն տարի գարնանը առվույտանոցը պետք է փոցխել և վորքան հին է նա, այնքան ավելի խոր և ուժեղ պետք է փոցխել: 3—4 տարվա առվույտը լավ կլինի փոցխել ափսեյավոր փոցխերով (Տես նկ. 6): (Ափսեյավոր



(Նկ. 6) Ափսեյավոր փոցխ

փոցխեր կարելի յե ձեռք բերել մոտակա վարձակալանաներից):

Այսպես փոցխելուց հետո ստացվում է խիտ և առողջ առվույտ և վոչնչանում են բոլոր մոլախոտերը:

Յերկրորդ տարվանից սկսած՝ ամառվա ընթացքում առվույտը քաղվում է մի քանի անգամ, համենայն դեպս

յերկու անգամից վոչ պակաս, իսկ ջրովի շրջաններում՝ 3—4 անգամ:

Ամեն անգամ քաղելուց հետո հողը յերկաթե փոցխով փոցխեն ոգտակար է: Ջրովի շրջաններում հողը պետք է ջրել և հետո միայն փոցխել:


Առվույտն առատ բերք է տալիս: Ամառվա 3—4 քաղը կարող է տալ մինչև 800 փուլթ խոտ: Առվույտը քաղում են ծաղկելուն պես:

Առվույտանոցում (յոնջալըղ) անասուններին պետք է զգուշությամբ արածեցնել, վորովհետև նրանք պնդացնում են հողը, վոր շատ է վնասում առվույտին: Այդ զգուշությունն անհրաժեշտ է նաև այն պատճառով, վոր կանաչ առվույտը յերեքնուկի նման փրացնում է անասունների փորը: յրա համար էլ խոնավ յեղանակին և թաց առվույտանոցում անասուններ չպետք է բաց թողնել և առհասարակ պետք է ձեռք առնել այն բոլոր միջոցները, ինչ վոր ասացինք յերեքնուկի համար:

ԱՌՎՈՒՅՏԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ. — Առվույտին թշնամի յեն բոլոր մոլախոտերը: Վորքան շատ են լինում մոլախոտերը, այնքան շուտ է վոչնչանում առվույտը, այդ պատճառով պետք է կովել մոլախոտերի դեմ: Առաջին տարին կարելի յե նույնիսկ ձեռքով քաղհանել, իսկ հետո անհրաժեշտ է ամեն տարի կանոնավոր փոցխել: Առվույտի մյուս թշնամիներից ամենից ավելի վնասակար է դ ա յ լ ա խ ո տ ը: Նա տարածվում է առվույտի վրա այնպես, ինչպես և յերեքնուկի վրա: Նրա դեմ կովելու միջոցները նույնն են, այսինքն՝ պետք է նավթով այրել և կամ պղնձի կամ յերկաթի արջասպով սրակել, հողը պետք է հերկել, բայց մի քանի տարի այդ հողում առվույտ չցանել: Գայլախոտը շատ համառ թշնամի յե, նրա սերմերը

յերկար ժամանակ պահում են իրենց ծիւրը լնդում ա-
կաթ յանդի:

ԿՈՐՆԳԱՆԻ. — (Տես նկ. 7): Չնայած կորնդանին ել



(Նկ. 7) Կորնգանի բույսը. Տեսեվը

առվույթի և յերեքնուկի պես նույն բույսերի կաղզին և
պատկանում, բայց տեսքով առվույթի և յերեքնուկի նման
չէ: Կորնգանի տերևներն առվույթի և յերեքնուկի տե-
րևների նման յերեք թերթիանի չեն, այլ փետուրի ձև
ունեն:

Կորնգանի արմատներն առվույթի և յերեքնուկի ար-
մատներից յերկար են, ուժեղ և յերաշտին դիմացկուն:
այդ պատճառով ել նա շատ ձենատու բույս և մեր չոր և
անջուր շրջանների համար: Կորնգանը սիրում է կրաքիտ
հողեր, բայց լավ է աճում և ուրիշ հողերում: Խորը գնա-
ցող իր արմատների շնորհիվ նա կարողանում է աճել
նույն խոկ ամենաաղքատ հողերում: Այս հանդամանքը
հնարավորութիւն է տալիս կորնգանը ցանել աշնայիսի
տեղերում, փորտեղ ուրիշ բույսերը լավ չեն աճում: Այդ-
պիսի տեղերում նրա լավ աճելու պատճառներից մեկն էլ
պիտի համարել այն, փոր ուրիշ բույսեր չեն աճում և
չեն խանգարում նրան: Մոլախոտերից կորնգանն ավելի
յե փախենում, քան առվույթը:

Կորնգանի սերմերն ել լոբու նման են, բայց ծած-
կված են դժվար բաժանելի մաշկով (փառով), այդ պատ-
ճառով ել ցանում են մաշկով: Մի գետնալոբ հողում դը-
նում է 10—12 փութ սերմ: Այնտեղ, փորտեղ կարող են
լինել մոլախոտեր, սերմերը պետք է խիտ ցանել: Հողը
պետք է հերկել խորը, փորովհետև փորքան խորը լինի
հերկը, այնքան ավելի լավ կը զարգանան կորնգանի ար-
մատները:

Ինչպես ասացինք, կորնգանը սիրում է չոր հողեր և
բոլորովին անհաջող է աճում ցուրտ և խոնավ հողերում:
Յանքսի համար հողը պետք է հերկել աշնանը, յեթե ցան-
վելու յե գարնանը և ամառվա սկզբին, յեթե ցանվելու

յե աշնանը: Ասացինք, վոր կորնգանի սերմը ցանում են մաշկով, բայց վորովհետեւ նա շատ թեթեւ է, այդ պատճառով մի որ սերմը ջրում պահում են, վորպեսզի ծանրանա. թրջված, ծանրացած սերմերը լավ են սերմվում և բացի դրանից հեշտ են ծլում:

Ավելի լավ է կորնգանը ցանել աշնանը, բայց վնչ ուշ սեպտեմբերի առաջին կեսից, վորպեսզի հնարավոր լինի ամառը նրանից խոտ ստանալ:

Աշնանը ցանքսը շուտ պիտի անել, վորպեսզի մինչև ցրտերն սկսվելը կորնգանի արմատները կարողանան լավ ամրանալ: Աշնան ցանքսը կատարվում է առանց պաշտպանող բույսի, սա լավ է նաև նրա համար, վոր կորնգանն առնասարակ չի սիրում ուրիշ բույսի հարեանությունը:

Բայց չնայած այս հանգամանքին, յեթե դարնանն է արվում ցանքսը (վորը պետք է կատարել վորքան կարելի յե վաղ), կորնգանը պետք է ցանել վորեւե հացահատիկի հետ, վորովհետեւ նա առանց պաշտպանող բույսի շատ կը տուժի արևի ճառագայթներից:

Յեթե կորնգանը ցանվում է դարնանը դարու հետ, այն դեպքում առաջ ցանում են դարին, հետո անմիջապես ցանում են կորնգանը և հողը լավ փոցխում, վորպեսզի ծածկվեն կորնգանի սերմերը:

Շատ քիչ է պատահում, վոր առաջին տարին կորնգանը յերկու քաղ տա, բայց յերկրորդ տարին նա տալիս է նաև յերեք քաղ: Պիտի նկատել, վոր ինչքան քիչ է քաղվում կորնգանը, այնքան յերկար ժամանակ է բերք տալիս: Յեթե կորնգանը քաղվում է մեկ անգամ, այն ժամանակ պետք է քաղել լրիվ ծաղկման շրջանում, իսկ յեթե ուզում են քաղել յերկու և ավելի անգամ, պետք է

քաղել ծաղիկների վողկույզները յերեալուն պես: Կորնգանի բերքը մեկ դեպատինից հասնում է 300—400 փթի:

Թեև կանաչ կորնգանը չի վնասում անասուններին, բայց լավ կլինի կորնգանի հողերում անասուններ չարածեցնել, վորովհետեւ կորնգանը պինդ հողերում չի դիմանում, իսկ արմատավզիկը, վորի վրա գտնվում են նոր ցողուններ տվող պտուկները, գտնվում է հողից բարձր, և անասունները կարող են նրան կրծել:

Տարեկան մեկ անգամ քաղելու դեպքում կորնգանը միևնույն տեղում կարող է դիմանալ 15 տարի. շնորհիվ այս հատկության, կորնգանը ցանում են ուրիշ բույսերի համար անպետք ճանաչված հողերում: Կորնգանից հետո այդ հողերը կարող են հացաբույսերի և կտավհատի լավ բերք տալ:

ՀԱՅԿԱՎՈՐ ԽՈՏԵՐ

Յերեքնուկը, առվույտը և կորնգանը պատկանում են այսպես կոչված լուբիանման բույսերի շարքին: Նըրանք այդպես են կոչվում, վորովհետեւ նրանց սերմերը նման են սովորական լոբուն և նրանից տարբերվում են միայն իրենց մեծությունով: Լոբիանման բույսերն իբրև անասունների կեր և պարարտանյութ շատ ոգտակար են:

Լավ խոտհարքներում բուսում են վնչ միայն յերեքնուկի, առվույտի և կորնգանի վայրի տեսակները, այլև շատ ուրիշ տեսակի խոտեր, վորոնք իրենց արտաքին տեսքով նման են հացաբույսերին: Այդ տեսակի բույսերը կոչվում են հասկավոր խոտեր:

Այդ խոտերը լոբիանման խոտերի նման հողը չեն հարստացնում ազոտով, բայց լավացնում են հողի կազմությունը, տալով նրան այնպիսի տեսք, ինչպիսի տեսք ունի խամ հողը:

Այս խոտերի բարակ արմատները, վորոնք նման են հացահատիկների արմատներին, ավելի խորն են գնում հողի մեջ, փաթաթվում են նրա մանր մասերին և կազմում փաղրիկ հատիկներ: Հերկելու ժամանակ այսպիսի հողն արմատների կազմած մանր գնդակների շնորհիվ հատիկային կազմությունն է ստանում:


Հողի այսպիսի հատիկավոր կազմությունն ամենաշատ օգտեցությունն է ունենում մշակվող բույսերի արմատների դարդացման վրա: Իրանով է բացատրվում, վոր խոտ հողերում հացահատիկների բերքն առատ է լինում:

Յեթն հերկած հողը մի քանի տարի հանգստի թողնենք, կտենենք, վոր լինչպես յորիանման, այնպես և հատկավոր խոտերն այդ հողամասում շատ են լինում: Առաջին տարիներում աճում են խոշոր, կոշտ և կերի համար անպետք խոտեր, միայն հեռավոր տարիներում ըսկըսում են յերեսը լավ, քաղցր խոտեր, վորոնք ծառայում են անասունների համար իրեն լավ կեր և հարստացնում են հողը:

Վորպեսզի լավ հատկության խոտ շուտ ստացվի, և մյուս կողմից ել հողի կազմը վերականգնելու աշխատանքներն արագանան, արհեստական կերպով ցանում են դառնալան խոտեր: Ցանելու համար վերցնում են այնպիսի խոտերի սերմեր, վորոնցից առնասարակ շատ են պատահում այդ շրջանի խոտհարքներում:

Այստեղ մենք կանգ չենք առնի բոլոր տեսակի խոտերի վրա, այլ կը մատնանշենք մեկ-յերկուսը միայն, վորոնք ցանելու տեսակետից առանձնապես նշանակություն ունեն:

ՍԻՉ. ԽՈՏ.—(Տես նկ. 8): Այս խոտը, լինչպես ստացվեր, շատ անգամ ցանում են յերեքնուկի հետ, մասնա-



(Նկ. 8) Սիգ խոտն իր հատկով

վանդ այն դեպքերում, յերբ ցանկանում են դաշտը 5-6 տարի թողնել խոտի համար:


Սիգ խոտը ցանում են նաև առանձին: Նրանից ստացվում է բավականին աննդարար խոտ: Սա այն առանձին հատկությունն ունի, վոր յերաշտին լավ է զիմանում և ստանալանիքներից չի վախենում: Այդ պատճառով ել նրան ցանում են ցուրտ շրջաններում:

Սիգ խոտը սերում է խոնավ հող և առնասարակ լավ է աճում այն շրջաններում, վորտեղ լավ է զարդանում նաև յերեքնուկը և իգուր չե, վոր նրան ցանում են յերեքնուկի հետ:

Սիգ խոտի սերմերը մանր են և մուգ-արծաթագույն: Մեկ գեսյալինի վրա ցանում են մեկ փութ: Յերեքնուկի հետ ցանելու դեպքում վերցնում են 20—25 փունտ:


Սիդ խոտը ցանում են նաև պաշտպանող բույսով, վաղ գարնանը, ձյունահալին, ինչպես յերեքնուկը: Մեկ դեսյատինից ստացվում է մինչև 100 փուլթ: Փափուկ խոտ ստանալու համար սիդ խոտը պետք է քաղել այն ժամանակ, յերբ ծաղկի գլուխները կերևան: Սիդ խոտը քաղելուց հետո ազատ կերպով կարելի յե անասուններ արածեցնել:

ԿՈՐԹՈՒՄ.—(Տես նկ. 9): Յեթե սիդ խոտը լավ



(Նկ. 9) Կորթումն իր հասկով

աճում է ցուրտ շրջաններում և հաճող բերք տալիս խոնավ հողերում,—ապա կորթումը սիդ խոտից տարբերվում է նրանով, վոր յերաշտին ավելի յե դիմանում, մի հանգամանք, վոր մեծ նշանակություն ունի մեր ջրասակալ շրջանների համար: Այդ պատճառով նա անփոխարինելի խոտ է: Կորթումը զարգանում և տարածվում է իր ստորյերկրյա ցողունի միջոցով (Տես նկ. 10): Կորթումն



(Նկ 10) Կորթումի ստորերկրյա ցողունները

սերմից առաջ ծլում է մեկ ցողուն, վորի վրա 5—6 տերև կազմվելուց հետո սկսում են զարգանալ նրա ստորյերկրյա ցողունները, որանցից էլ սկսում են վեր բարձրանալ նոր ցողունները: Ցողունների զարգացումը տեղի յե ունենում շարունակաբար անընդհատ, այդ պատճառով էլ կորթումը մոլախոտերից չի վախենում, այլ ընդհակառակն, ինքն է նրանց խեղդում: Միայն առաջին տարին, յերբ դեռ բույսը թույլ է, նրան կարող են խանգարել մեծ խոտերը, ինչպես սրինակի թոթնջուկը, փշախնձորը կամ մորմը, մոլեխինդը և այլն: Այդ պատճառով էլ

այդ մարտիկներն արմատից պետք է կտրել բաժնի կամ հողատարածով (թիֆլիսի, թախտաշահի, գաղմա):

Ս. 7 տարուց հետո միայն կորթումն սկսում է թուլանալ և նրա ստորերկրյա ցողունների արանքներում սկսում են տեղ գտնել ուրիշ խոտեր:

Կորթումի սերմերը յերկար են, թեթև և վարդ չափով նման վարսակի (խրվուկի) սերմին: Մեկ գետնափնի վրա ջանում են 4 փուլ: Առհասարակ ջանում են դարձանք վարսակի կամ դարու հետ: Բերք ստացվում է յերկրորդ տարվանից: Աճում է ամեն տեսակի հողերում: Հողը ջանելու համար հերկում, մշակում են ճիշտ այնպես, ինչպես հացարույանի համար:

Նայած անձրևների քանակին, մեկ գետնափնից կարող է ստացվել 100—200 փուլ խոտ: Փաղում են մինչև սերմերի հասնելը: Կորթում բոսոժողերում ստացվին տարին անասուններ արածեցնել չի կարելի. յերկրորդ տարվանից կարելի չէ:

Այսպիսով մենք պարզեցինք, թե առհասարակ ինչ նշանակություն ունի խոտաշնորհիկները և ծանոթացանք խոտերի զլխավոր անատիկների հետ: Պետք է ասել, վոր խոտաշնորհիկները մեր անտեսության հաջող զարգացման համար միակ է ուղիղ միջոցն է թե ստիարակներում և թե լեռնային շրջաններում:

Յեթե ասք և նախալեռնային շրջաններում խոտաշնորհիկյան զլխավոր նպատակն է լինելու պարարտացնել հողերը, վերականգնել նրանց ուժերն ու կազմը — ապա լեռնային շրջաններում նա մեծ դեր է կատարելու անասնապահությանը զուլիացնելու համար: Կարելի չէ ասել, վոր առանց խոտաշնորհիկյան չի կարելի ունենալ արդյունավետ անասնապահություն և կաթնատնտեսություն:


«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ս. Շադունց. — Մեր անեկիքները 20 կ.
2. Զ. Փիտուկյան յեվ Ս. Մեղունյան. — Ինչու ծնունտ չի գործարանում յուզ յեվ շիկցարական պանիր պատրաստելը 3 »
3. Խ. Ավգալբեզյան. — ՀՍԽՀ հողային Ռեկոնստրուկցիայի հարց ու պատասխաններով, մասն առաջին, աշխատավորական հողագործություն 40 »
4. Զ. Փիտուկյան. — Պտուղների յեվ նրանց մշակության յեղանակները 10 »

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿԵ ՏԵՍԵԼ

1. Թեթևին յեվ նրա խնամքը
2. Շերամի վորդը, նրա կերակրքը յեվ խնամքը



ՀՀ Ազգային գրադարան



NL0926347

46

1925₁₂.

Kuvenas Nava

11

24363

idpnenum 286.

ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.

Դիմել՝ Շեհզադե, Հոգևորկոմստի Հրատարակչության
Դավանողաժիններին
Պետրոստի գրախանութներին